

Ներածություն

Սպառողների լայն շրջանակին ուղղված վիճակագրական սույն ժողովածուում արտացոլված են հանրապետության սոցիալական վիճակը բնութագրող 2003թ. վիճակագրական ցուցանիշների քանակական վերլուծությունը և նախորդ մի շարք տարիների ամփոփ տվյալների դինամիկան: Ցուցանիշների ընտրությունը կատարվել է՝ ելնելով վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջներից և միջազգային համադրելիության ապահովման անհրաժեշտությունից:

Ժողովածուում ներառված են հետևյալ բաժինները՝ կրթություն, գիտություն, առողջապահություն, ժամանակավոր անաշխատունակություն, սոցիալական ապահովագրություն և ապահովություն, մանկական խնամատարական, տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպությունների գործունեություններ, որդեգրում, գրադարանների գործունեություն, մշակույթ, արխիվային, արտոնագրային, նոտարական գործունեություններ, ստանդարտացում, սերտիֆիկացում և հավատարմագրում, իրավական ոլորտ: Բաժիններն ավարտվում են հիմնական ցուցանիշների վիճակագրական դինամիկ շարքերով:

ՀՀ ԱՎԾ-ն իր երախտագիտությունն է հայտնում ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության վարչության անչափահասների գործերով բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ տիկին Ն.Դուրյանին՝ տրամադրած տեղեկատվության համար:

Հուսով ենք, ժողովածուն կարող է տեղեկատվական հիմք հանդիսանալ սոցիալական քաղաքականություն մշակողների և այն իրականացնողների, գիտակրթական գործունեությամբ զբաղվողների և վերլուծաբանների, ինչպես նաև հանրության լայն շրջանների համար:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն